

Արձանագրություն №5

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2012թ. հունիսի 28-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 61-ը (վաթսունմեկ):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում: (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Մահակյան)
2. Ֆակուլտետային կանոնադրությունների հաստատում: (Ձեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Մողոմոնյան)
3. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը հաստատելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)
4. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2011թ. հարցման արդյունքների մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
5. ԵՊՀ հանրային կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների արդի վիճակը: (Ձեկ.՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Կ. Հ. Գրիգորյան):
6. ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգի հաստատում: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյան)
7. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն ստեղծելու մասին: (Ձեկ.՝ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Ա. Աբրահամյան)
8. Գիտական զեկուցում. <<Քրդական հարցի զարգացումները ժամանակակից Թուրքիայում>>: (Ձեկ.՝ Միջագային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի պրոֆեսոր Վ. Ա. Բայբուրդյան)
9. Ընթացիկ հարցեր
 - 9.1 Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ. Շուշանիկ Պարոնյանի <<Pragmatics>> վերատառությամբ ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:
 - 9.2 ՈԻԳԸ 2011-12 ուստարվա 2-րդ կիսամյակի բնագիտական և հումանիտար մասնագիտություններով ուսանողական գիտական հոդվածների ժողովածուները հրատարակության երաշխավորելու մասին:

9.3 Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում լրացում կատարելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

9.4 Կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին.- դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը: Մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

	Ազգանուն անուն հայրանուն	Ամբիոնը, պաշտոնը	Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը
1.	Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի	Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ	Քաղ. գիտ. դոկտոր /2010/ ԻԳ.00.02- քաղ ինստ. և գործընթացներ, դոցենտ /2004/
2.	Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի	Թյուրքագիտության ամբիոնի վարիչ	Պատմ. գիտ. թեկնածու /1995/, Է.00.00 – պատմություն, դոցենտ /2004/
3.	Աբաջյան Աննա Հենրիկի	Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ	Բանասիր. գիտ. դոկտոր /2007/, Ժ.02.01 – հայոց լեզու, դոցենտ /2005/

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

	Ազգանուն անուն հայրանուն	Ամբիոնը, պաշտոնը	Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը
1.	Բայյան Արշակ Յուրիի	Հայ եկեղեցու պատմ և եկեղեցաբան. ամբիոնի ասիստենտ	Պատմ. գիտ. թեկնածու /2009/ Է. 00.00- պատմություն
2.	Բարսեղյան Լիանա Վահրամի	Անգլերեն լեզվի թիվ 2-րդ ամբիոնի ասիստենտ	Բանասիր. գիտ. թեկն /2003/, Ժ.02.07. – գերմանական լեզուներ
3.	Հովսեփյան Գոհար Սամվելի	Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ	Բանասիր. գիտ. թեկն /2005/, Ժ.02.07. – գերմանական լեզուներ
4.	Հարությունյան Գոհար Ռազմիկի	Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ	Բանասիր. գիտ. թեկն /2009/, Ժ.02.07. – գերմանական լեզուներ
5.	Գիրունյան Գայանե Սուրենի	Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ	Բանասիր. գիտ. թեկն /2005/, Ժ.02.07. – գերմանական լեզուներ
6.	Աղաջանյան	Հայոց լեզվի ամբիոնի	Բանասիր. գիտ. թեկն /1996/, Ժ.02.01. – հայոց

	Զարիկ Խաչատուրի	ասիստենտ	լեզու
7.	Հարոյան Հովհաննէս Սամվէլի	ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի ասիստենտ	Տեխնիկական գիտ. թեկնածու /2006/ Ա.04.03- ռադիոֆիզիկա
8.	Թադևոսյան Վահէ Ռազմիկի	ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի ասիստենտ	Ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2005/ Ա.04.03 - ռադիոֆիզիկա
9.	Մինասյան Դավիթ Մելսի	Մեխանիկայի ամբիոնի ասիստենտ	Ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2002/ Ա. 02.00 - մեխանիկա

Թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությանը մասնակցեցին գիտխորհրդի նիստին ներկա բոլոր 61 անդամները: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ *Հովսեփյան Մուշեղ Մայիսի (նախագահ), Ջոհրաբյան Էդիկ Արսենի, Ասատրյան Գառնիկ Սերոբի, Ավագյան Գոռ Վահանի, Յավրուսյան Տաթևիկ Մասունի:*

Պրոֆեսորի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի	54	7	0
2.	Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի	53	8	0
3.	Աբաջյան Աննա Հենրիկի	56	5	0

Դոցենտի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Բայյան Արշակ Յուրիի	61	0	0
2.	Բարսեղյան Լիանա Վահրամի	61	0	0
3.	Հովսեփյան Գոհար Սամվէլի	59	1	1
4.	Հարությունյան Գոհար Ռազմիկի	59	1	1
5.	Գիրունյան Գայանե Սուրենի	60	1	0
6.	Աղաջանյան Զարիկ Խաչատուրի	49	10	2
7.	Հարոյան Հովհաննէս Սամվէլի	60	1	0
8.	Թադևոսյան Վահէ Ռազմիկի	60	1	0
9.	Մինասյան Դավիթ Մելսի	60	1	0

Արտահայտվեցին. – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը, Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Լ. Եզեկյանը, հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ Յ. Մովսիսյանը, գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը և ՈւԽ անդամ Ն. Մելքոնյանը:

Որոշեցին. - 1.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

1.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար:

2. Լսեցին.- Ֆակուլտետային կանոնադրությունների հաստատում: (Զեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան):

Գիտխորհրդի կողմից հաստատված չէր մնացել արևելագիտության և սոցիոլոգիայի ֆակուլտետների կանոնադրությունները: Սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի նիստ դեռևս չէր կայացել, իսկ արևելագիտության ֆակուլտետն իր խորհրդի նիստում ընդունել էր ֆակուլտետի կանոնադրությունը, որը արժանացել է ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի հավանությանը:

Որոշեցին.- Հաստատել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի կանոնադրությունը:

3. Լսեցին. - ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը հաստատելու մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան): Գ. Գևորգյանը նշեց, որ ընթացակարգի նախագիծը նախապես ուղարկված է եղել բոլոր ֆակուլտետներին և գիտական խորհրդի անդամներին: ԵՊՀ հայ բանասիրության, արևելագիտության, ռադիոֆիզիկայի և ժուռնալիստիկայի ֆակուլտետները հանդես են եկել առաջարկություններով և հարցադրումներով: Գ. Գևորգյանը ներկայացրեց նշված առաջարկությունների ընդունված և մերժված լինելու հանգամանքները:

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը և գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը: Ե. Միրզոյանն առաջարկեց խմբագրական ուղղում՝ ընթացակարգի 25-րդ կետում <<կենտ թվով>> բառերից հետո ավելացնել <<անդամներով>> բառը: Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Որոշեցին.- Հաստատել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը:

4. Լսեցին. - ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2011թ. հարցման արդյունքների մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան): Ա. Գրիգորյանը ներկայացրեց հարցումներին մասնակցած շրջանավարտների թիվն ըստ ուսումնառության ծրագրերի (բակալավրի և մագիստրոսի), շրջանավարտների դիրքորոշումն ուսումնառությունը շարունակելու վերաբերյալ, շրջանավարտների զբաղվածության պատկերը, շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից, ԵՊՀ-ում ստացած տեսական գիտելիքների գնահատումը, ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատումը, շրջանավարտների դիրքորոշումը հաճախած դասընթացների օգտակարության վերաբերյալ, շրջանավարտների դիրքորոշումը

գիտելիքների գնահատման օբյեկտիվության վերաբերյալ, շրջանավարտների դիրքորոշումը պրակտիկաների օգտակարության վերաբերյալ, շրջանավարտների դիրքորոշումը մասնագիտական կարողությունների ձեռքբերման վերաբերյալ, շրջանավարտների դիրքորոշումը գործնական հմտությունների ձեռքբերման վերաբերյալ, շրջանավարտների դիրքորոշումը համալսարանում օտար լեզուների իմացության ապահովման վերաբերյալ, շրջանավարտների կարծիքը գիտելիքների գնահատման գործընթացում կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ, շրջանավարտների դիրքորոշումը միջնորդությամբ գնահատվելու վերաբերյալ և շրջանավարտների՝ ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ այլ ցուցանիշներ:

Արտահայտվեցին – ռեկտոր Ա. Սիմոնյանը, պրոռեկտոր Գ. Գևորգյանը, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյանը, կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ Վ. Հարությունյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական հետազոտական կենտրոնի գիտական ղեկավար Ս. Շուքուրյանը:

Որոշեցին. – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին հարցումների արդյունքներն ընդհանրապես և ֆակուլտետային հարցումների արդյունքները մասնավորապես քննարկել ֆակուլտետների գիտական խորհուրդների և ամբիոնների նիստերում և համապատասխան աշխատանքներ տանել թերությունների և բացթողումների շտկման ուղղությամբ:

5. **Լսեցին.** - ԵՊՀ հանրային կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների արդի վիճակը: (Զեկ.՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Կ. Հ. Գրիգորյան): Կ. Գրիգորյանը ներկայացրեց հանրային կապերի հասկացության համարատը, ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության կողմից անցկացված ուսումնասիրությունների, հետազոտությունների առավել կարևոր տվյալները, համալսարանում հասարակայնության հետ կապերի աշխատանքներն ըստ հիմնական ոլորտների (մարքեթինգային միջոցառումներ, համալսարանի ներքին հաղորդակցության բարելավմանն ուղղված աշխատանքներ, ԵՊՀ-ի ներկայացվածությունը համացանցում, ՋԼՄ-ների հետ տարվող աշխատանքները, համալսարանի գիտական ներուժի ներկայացումը, միջազգային կապերի պատշաճ ներկայացումը, կոռուպցիայի դեմ մղվող պայքարի լուսաբանումը, երկրի հասարակական ու մշակութային կյանքին համալսարանի ներգրավվածությունը, հանրային կարծիքի ուսումնասիրությունները):

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ Վ. Հարությունյանը, ՈւԽ նախագահ Յ. Ակոպյանը:

Որոշեցին. – ընդունել ի գիտություն:

6. Լսեցին.- ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգի հաստատման մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյան): Ռ. Մարկոսյանը ներկայացրեց հանրային կապերի հայեցակարգի հիմնական դրույթները: Անդրադարձ կատարվեց նպատակներին ու խնդիրներին, աշխատանքների կազմակերպմանն ու համակարգմանը, հանրային կապերի աշխատանքային ուղղություններին:

Որոշեցին.- Հաստատել Երևանի պետական համալսարանի հանրային կապերի հայեցակարգը:

7. Լսեցին. - Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն ստեղծելու մասին: (Ձեկ.՝ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Ա. Աբրահամյան): Ս. Աբրահամյանը նշեց, որ վերջին տարիներին ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության բաժնի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է: Ֆակուլտետի խորհուրդն, ըստ Աբրահամյանի, եկել է եզրակացության, որ համապատասխան ամբիոնի ստեղծումը կոյուրացնի միջմշակութային հաղորդակցության բաժնի սպասարկումը և կնպաստի դասավանդման որակի բարձրացմանն ու միջմշակութային կապերի ընդլայնմանը:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Սիմոնյանը, ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դ. Սեդրակյանը, ՈւԽ նախագահ Յ. Ակոսյանը:

Որոշեցին. – ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում ստեղծել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն:

8. Լսեցին. - Գիտական զեկուցում. <<Քրդական հարցի զարգացումները ժամանակակից Թուրքիայում>>: (Ձեկ.՝ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի պրոֆեսոր Վ. Ա. Բայբուրդյան): Պրոֆ. Վ. Բայբուրդյանը համառոտ անդրադարձ կատարեց քրդական հիմնախնդրի ծագման և զարգացման պատմությանը, ներկայացրեց քրդերի ինքնորոշման խնդրին առնչվող միջազգային իրադրությունը՝ հանգելով հոռետեսական գնահատումների՝ քրդերի՝ տեսանելի ապագայում Թուրքիայից անջատվելու և սեփական պետականություն ստեղծելու հարցում:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանը, Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը, ՈւԽ նախագահ Յ. Ակոսյանը:

Որոշեցին – ընդունել ի գիտություն: Նիստի մասնակիցները շնորհակալություն հայտնեցին պրոֆեսոր Բայբուրդյանին ներկայացված հետաքրքիր զեկուցման համար:

9. Լսեցին. – Ընթացիկ հարցեր:

9.1 Լսեցին. - Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ. Շուշանիկ Պարոնյանի <<Pragmatics>> վերտառությամբ ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ բ.գ.դ. Շուշանիկ Պարոնյանի <<Pragmatics>> վերտառությամբ ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցում առկա են ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի, մեթոդական խորհրդի և անգլիական բանասիրության ամբիոնի դրական եզրակացությունները, ինչպես նաև նշված ձեռնարկի վերաբերյալ ստացված դրական գրախոսությունները:

Որոշեցին. - Երևանի պետական համալսարանի անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ Շուշանիկ Պարոնյանի <<Pragmatics>> վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

9.2 Լսեցին - ՈՒԳԸ 2011-12 ուստարվա 2-րդ կիսամյակի բնագիտական և հումանիտար մասնագիտություններով ուսանողական գիտական հոդվածների ժողովածուները հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ առկա են ԵՊՀ ՈՒԳԸ հոդվածների ժողովածուներում ընդգրկված աշխատանքների հրատարակման վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների դրական եզրակացությունները:

Որոշեցին.-

1. Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության 2011-12 ուստարվա 2-րդ կիսամյակի ժողովածուները (բնական և հասարակական գիտություններ) երաշխավորել հրատարակման:
2. Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ի առջև՝ նշված ժողովածուները ճանաչել որպես թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության համար ընդունելի հոդվածների ժողովածուներ:

9.3 Լսեցին. - Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում լրացում կատարելու մասին: (Ձեկ՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան): Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ նշված կանոնակարգի վերջին փոփոխություններից հետո բաց է մնում այն հարցը, որ այդ կանոնակարգով համալսարանի աշխատող-ուսանողները և աշխատողների երեխա ուսանողները վարձի գեղջման հնարավորությունից կարող են օգտվել միայն

ուսումնառության 2-րդ կիսամյակից սկսած, իսկ նախկինում այդ հնարավորությունը մշտապես տրվել է ուսումնառության 1-ին կիսամյակից սկսած: Այս խնդրի լուծման համար Ա. Գրիգորյանը առաջարկեց կատարել համապատասխան լրացում:

Որոշեցին. - Կանոնակարգի 18-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «18. Առաջին կուրսի ուսանողները, ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից, բացառությամբ 10.9-րդ կետում նախատեսված դեպքերի»:

9.4 Լսեցին. – Կառուցվածքային փոփոխություններ կատարելու մասին: Զեկ՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան
Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ «Երևանի պետական համալսարանի համալսարանական կրթության զարգացման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորման եղանակով «Երևանի պետական համալսարանի որակի ապահովման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման վերակազմակերպելու անհրաժեշտությունը բխում է Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014թթ.) I բ խնդրի իրականացման պահանջներից:

Որոշեցին. -

1. «Երևանի պետական համալսարանի համալսարանական կրթության զարգացման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորման եղանակով վերակազմակերպել «Երևանի պետական համալսարանի որակի ապահովման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ երկամսյա ժամկետում Երևանի պետական համալսարանի ռեկտորին ներկայացնել կենտրոնի կանոնադրության նախագիծը և կառուցվածքը:

3. «Երևանի պետական համալսարանի ուսումնամեթոդական վարչության համալսարանական կրթության որակի ապահովման և վերահսկման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը անվանափոխել «Երևանի պետական համալսարանի ուսումնամեթոդական վարչության ուսումնական գործընթացի վերահսկման բաժին» կառուցվածքային ստորաբաժանման:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան
03.07.2012թ.